ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

✓ **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արև ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

✓ **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Աբիջան (Կոտ դ'Իվուարի Հանրապետություն) 2017 թ. հուլիսի 21-25-ը

✓ **ՆՊԱՏԱԿԸ**

- **Մասնակցություն Ֆրանկոֆոնիայի 8-րդ միջազգային մարզամշակութային խաղերին,**
- **հուլիսի 22-23-ին ֆրանկոֆոն երկրների մշակույթի նախարարների 4-րդ համաժողովին:**

2017 թվականի հուլիսի 21-30-ը Աբիջանում (Կոտ դ'Իվուարում՝ Փղոսկրե ափ) կայացան Ֆրանկոֆոնիայի 8-րդ մարզամշակութային խաղերը:

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը հիմնադրվել է 1970 թվականին, որում ընդգրկված են 57 լիիրավ, 3 ասոցացված և 20 դիտորդի կարգավիճակ ունեցող պետություններ, որոնցից 32-ում ֆրանսերենն ունի պաշտոնական կամ երկրորդ պաշտոնական լեզվի կարգավիճակ:

Հայաստանը մասնակցում է Ֆրանկոֆոնիայի շարժմանը 2004 թվականից՝ սկզբում որպես դիտորդ, 2008 թվականից՝ որպես ասոցացված անդամ, իսկ 2012 թ. հոկտեմբերից՝ որպես լիիրավ անդամ:

Ֆրանկոֆոնիայի խաղերն անց են կացվում չորս տարին մեկ անգամ: Մշակույթի և սպորտի ոլորտներում Հայաստանը մասնակցել է 2009 թ. Բեյրութում /Լիբանան/ և 2013 թ. Նիցցայում /Ֆրանսիա/ կայացած խաղերին:

Կոտ դ'Իվուարի Հանրապետության Ֆրանկոֆոնիայի 8-րդ միջազգային խաղերի պատասխանատուի՝ նախարար Ռոբերտո Բեյուգրե Մամբիի հրավերով, որպես Ֆրանկոֆոնիայի խաղերի պատասխանատու և համակարգող, 2017 թ. հուլիսի 21-25-ը մեկնել էի Աբիջան՝ ներկա գտնվելու Ֆրանկոֆոնիայի 8-րդ միջազգային մարզամշակութային խաղերի բացման պաշտոնական արարողությանը, ինչպես նաև հուլիսի 22-23-ին մասնակցելու ֆրանկոֆոն երկրների մշակույթի նախարարների 4-րդ համաժողովին:

Հայաստանի Հանրապետությունը մշակույթի բնագավառից նշյալ խաղերին մասնակցեց «Երգ», «Պար», «Քանդակագործություն», «Նկարչություն», «Լուսանկարչություն», «Գրականություն», «Հեքիաթ» անվանակարգերում: Նախապատրաստական երկամյա աշխատանքները նախորդել էին խաղերին /տեղական ընտրության փուլեր, միջազգային փորձագետների կողմից ընտրության փուլ, ստեղծագործական ծրագրերի մշակում/:

Կոտ դ՛Իվուար մեկնել էին «Երգ» անվանակարգում՝ Անի Սարգսյան, «Պար»՝ Արփինե Բլայան և Գեղամ Հակոբյան, «Քանդակագործություն»՝ Հայկ Ղազարյան, «Նկարչություն»՝ Արարատ Մինասյան, «Լուսանկարչություն»՝ Անուշ Բաբաջանյան, «Գրականություն»՝ Աննա Բաղդասարյան, «Հեքիաթ»՝ Մերի Գալստյան:

Ինչպես հուշում է ֆրանկոֆոն խաղերի անվանումը՝ «մարզամշակութային», մյուս կարևոր բաղադրիչը՝ սպորտն է: Այս տարի նույնպես մեր պատվիրակության

մարզիկները բարձր պարգևների արժանացան /ոսկե, արծաթյե և բրոնզե մեդալներ/:

Հուլիսի 22-23-ը կայացած ֆրանկոֆոն երկրների մշակույթի նախարարների 4-րդ համաժողովի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները.

- մշակութային խնդիրների և մարտահրավերների համաշխարհային կառավարում,
- մշակույթը՝ որպես մարդկության կայուն զարգացման գործոն,
- մշակութային տնտեսության խթանում,
- մշակութային համագործակցությունը և համերաշխությունը:

Ելույթ ունեցա «Մշակույթը՝ որպես մարդկության կայուն զարգացման գործոն» թեմատիկ քննարկման ժամանակ՝ ներկայացնելով Հայաստանում մշակութային ոլորտի ռազմավարական և կարևոր ուղղությունները, ինչպես նաև տեղեկատվություն տվեցի առ այն, որ 2018թ հոկտեմբերին Հայաստանում է կայանալու Ֆրանկոֆոն երկրների գագաթաժողովը: ֆրանկոֆոն երկրների մշակույթի նախարարների հաջորդ համաժողովը տեղի կունենա 4 տարին անց Քվեբեկում /Կանադա/:

Նշյալ համաժողովի աշխատանքների ավարտին ստորագրվեց հուշագիր:

- ✓ **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- ✓ **Հայաստանյան մասնակիցները Ֆրանկոֆոնիայի 8-րդ միջազգային խաղերի արդյունքում արժանացան հետևյալ մրցանակների.**

«Լուսանկարչություն» անվանակարգում՝ արծաթե մեդալ, «Գրականություն» անվանակարգում՝ հատուկ մրցանակ, հրավեր Լիոն և գրքի հրատարակություն:

- ✓ **Պայմանավորվածություն ձեռք բերվեց Ֆրանկոֆոնիայի հաջորդ՝ 9-րդ միջազգային մարզամշակութային խաղերն անցկացնել Քվեբեկում (Կանադա):**

- ✓ **Ֆրանկոֆոնիայի 8-րդ միջազգային խաղերի արդյունքում ստորագրվեց «Աբիջանի դեկլարացիա» փաստաթուղթը:**

- ✓ **ֆրանկոֆոն երկրների մշակույթի նախարարների 4-րդ համաժողովի աշխատանքի ավարտին ստորագրվեց հռչակագիր:**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ՝

Ա. ՍԱՄՈՒԵԼՅԱՆ